# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՁ Մանվել Մաթևոսյան Վահանի-ն ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 12 | Զգեստապահարանը պատրաստված կլինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, կլինի ողորկ, առանց ծլեպների և արտադրական խոտանների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները կլինեն հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվում է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Կապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Կապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը կլինի հարմարավետ ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Զգեստապահարանն ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պատրաստված կլինի լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓՏՍ-ից արտաքին չափսերը՝820 x 450 x 2000 մմ (L x Խ x Բ): Զգեստապահարանը վերևից ունի 400 մմ բարձրությամբ 1 դարակաշար, որից 60 մմ հեռավորությամբ տակից ամարցվում է ¾ դյույմ քրոմապատ, մետաղական երկաթյա ամուր և որակյալ ձող՝ համապատասխան ամրացումներով: Զգեստապահարանն ունի 2 իրար հավասար դուռ, դռները՝ լամինացված 18 մմ հաստությամբ E0դասի ՓՏՍ-ից: Դռներից յուրաքանչյուրը ամրացվում է 3-ական ծխնիով: Դռները կունենան մետաղական օվալաձև բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4 մմ հաստության պոլիմերային |

| | | |
|---|---|---|
| | | եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը կլինի անփայլ։ Բոլոր միացումները կիրականացվեն թաքնված ամրակցումներով։ Հետնապատը կլինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթեփային սալից(ԴՎՊ) և նույն E0դասի ՓSU-ի գույնի: Պահարանը ամբողջ պարագծով կունենա շրջանակաձև ոտքեր, որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից կամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ՝ 8 մմ հաստությամբ: Ոտքերըբ կլինեն կարգավորվող։ Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 800 x420 x 100 մմ (L x Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից կամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է լինելու: Նմուշները մինչ մատակարարում կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ կսահմանվի երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով։ Ապրանքի վրա կկատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կկատարվի հայերեն ընթեռնելի տարբերակով։ Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում վերոգրյալ տեղեկատվությունը կամփոփվի ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՁ Մանվել Մաթևոսյան Վահանի в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 12 | |